

ՏՆՏԵՍԱԳԻՇՈՒԹՅԱՆ ԵՍՈՒԹՅՈՒՆ



ՎԱՐԴԱՆ ԱՐԱՄՅԱՆ

ՀՀ նախագահի աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՈՂԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱՆԱ ԵԿՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Մաքսային միություններին անդամակցող երկրների փորձը ցուց է տալիս, որ սակագնային և ոչ սակագնային համակարգերի ներդաշնակեցման ընթացքում առաջ են գալիս տնտեսական ազդեցություններ, որոնք լինում են ստատիկ (անմիջապես արտահայտվող) և դիմամիկ (դրսորդվում են ժամանակի ընթացքում): Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում ունենում է վնասներ և օգուտներ, որոնց գուտ արժեքն ըստ օգուտի գնահատված է լրացրույթում՝ ՀՆԱ 2.35 տոկոսային կեսի սահմաններում: ԵԱՏՄ բարձր նաքսատությունից պատճառով բարեկեցության կորուստը գնահատված է ՀՆԱ 0.14%: Ընդ որում, ժամանակի ընթացքում ԵԱՏՄ ընդհանուր նաքսատությունից նվազման արդյունքում բարձր նաքսատությունից առաջ եկող հնարավոր տնտեսական վնասները Հայաստանի համար պակասում են, իսկ բարեկեցության կորուստը կազմում է ՀՆԱ 0.09%-ը:

Հիմնարարեր. մաքսատությ, բարեկեցության օգուտ և վնաս, առևտության ստեղծում, առևտության վերակողմնորոշում, գնած, սակագնային և ոչ սակագնային համակարգեր

2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահը պաշտոնապես հայտարարեց Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցության մտադրության մասին, որին հաջորդեց 2014 թ. հոկտեմբերի 10-ին հա-

մապատասխան պայմանագրի ստորագրումը: 2015 թ. հունվարի 2-ից Հայաստանը դարձավ ԵԱՏՄ անդամ 4-րդ երկրը:


Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Երկրները տարածաշրջանային միասնացման 3-րդ մակարդակից՝ Մաքսային միությանն անդամակցումից հետո պարտադրված են լինում ներդաշնակեցնել տարիֆային համակարգը և ոչ տարիֆային կարգավորումները Մաքսային միության գործող համակարգերի հետ: Արդյունքում առաջանում են տնտեսական ազդեցություններ, որոնք լինում են ստատիկ և դինամիկ:

Սույն հոդվածում ներկայացվում են Հայաստանի տնտեսության վրա Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու առևտի և բարեկեցության ազդեցության ստատիկ գնահատականները:

Տնտեսական գնահատականները հիմնվում են Հայաստանի և ԵԱՏՄ մաքսատուրքերի համեմատականների վրա, ընդ որում, Վերջիններիս դեպքում հաշվի են առնվել ինչպես արժեքային (ադվալորային), այնպես էլ յուրահատուկ և բաղադրյալ մաքսատուրքերը¹:

Կատարվել է նաև համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵԱՏՄ մաքսատուրքերն աստիճանաբար նվազելու են մինչև 2020 թ.՝ կապված ՌԴ՝ Առևտի համաշխարհային կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունների հետ² (ՌԴ մաքսատուրքի փոփոխությունները մինչև 2020 թ. ՌԴ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների համաձայն, կարտացոլվեն ԵԱՏՄ մաքսատուրքերում)³:

Ստորև ներկայացվում է ԵԱՏՄ մաքսատուրքերի կառուցվածքը գործող մաքսային օրենսգրքի շրջանակներում.



¹ Հաշվարկներում օգտագործված թվային տվյալների համարդեկիությունը և աճողջականությունը ապահովելու համար օգտագործվել է Համաշխարհային բանկի Երկրների արտաքին առևտի տվյալների բազան: Թե՛ առևտի Եվկետուային տվյալները, թե՛ կիրառվող մաքսատուրքերի ցուցանիշներն ըստ 2013 թ. են, քանի որ տվյալների համադրելիությունն ապահովելու տեսանկյունից Համաշխարհային բանկի միասնական տվյալների բազայում նշյալ տարկա ցուցանիշներն անբողջական են:

² Տես Договор о функционировании Таможенного союза в рамках многосторонней торговой системы.

³ Տես **Օլեքսանդր Շեպոտյոլ, Դեյվիդ Գ. Թար,** «ԱՀԿ անդամակցության և Մաքսային միության ազդեցությունը Ռուսաստանի Դաշնության մաքսատուրքի թույլատրելի առավելագույն և կիրաված դրույքափերի վրա», Համաշխարհային բանկի բաղադրականության հետազոտության աշխատանքային փաստաթուղթ 6161, օգոստոս, 2012 (**Oleksandr Shepotylo and David G. Tarr, Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation World Bank Policy Research Working Paper 6161, August, 2012**):

ԵԱՏՄ մաքսատուրթերի գործող սանդղակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս, ի տարբերություն Հայաստանի՝ մինչ անդամակցությունը գործող սանդղակի, ավելի ցրված են և բազմաթերթ, որտեղ արժեքային (ադվալորային) մաքսատուրթերը կազմում են ընդհանուրի 84%-ը, իսկ մնացածը համախմբված և հատուկ (սպեցիֆիկ) մաքսատուրթերն են: Հայաստանում սակագնային համակարգն ավելի պարզ էր. Երկառնողակային էր՝ 0 կամ 10, իսկ մաքսատուրթերը, ըստ տեսակի, հիմնականում արժեքային էին (հատուկ մաքսատուրթեր են գործել, օրինակ, սպիրտային խմիչքների մասով՝ ԱՏԳ 2203-2208 խմբերի և որոնց մեջ մտնող որոշ ենթախմբների համար):⁴

2013 թ. ՀՀ ներմուծման ծավալներով կշռված ՀՀ միջին մաքսատուրթը, ըստ հաշվարկների, կազմել է 3.1%, իսկ ԵԱՏՄ նույն ցուցանիշը՝ 8.14%: Այլ հավասար պայմաններում, առևտությունները և փորձառական վերլուծությունները փաստում են, որ տարիքների բարձրացումը բարեկեցության կրոստի և «մեռյալ ծախսերի» (deadweight losses) պատճառ է դաշնում: Իհարկե, այս պնդումը միշտ դիտարկվում է մակրոմակարդակում և ոչ՝ ժամանակի ընթացքում (դիմամիկայում), ուստի ներկայացնում է ստատիկ գնահատական: Միջնաժամկետում (դիմամիկայում) սակագնային համակարգի ներդաշնակեցումը հարաբերական գների փոփոխությունների միջոցով կարող է հանգեցնել ստատիկ գնահատականից տարբերվող ազդեցությունների, բայց նշյալ վերլուծությունը սույն հոդվածի շրջանակներից դուրս է. այստեղ դիտարկվում են միայն ստատիկ գնահատականները:

Այյուսակ 1-ում, ըստ ներմուծման ծավալների, Հայաստանի մաքսատուրթերի բաշխվածությունը համեմատվում է ԵԱՏՄ մաքսատուրթերի բաշխվածության հետ: Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ, օրինակ, մեր ներմուծման 27.4%-ի դեպքում նույն տարիքային՝ 0<3% միջակայքն էր գործում և Հայաստանում և ԵԱՏՄ-ում, իսկ ներմուծման 8.4%-ը մեզ մոտ հարկման 0<3% միջակայքում էր, ԵԱՏՄ տարիքային համակարգի կիրառման դեպքում՝ 10<15% միջակայքում⁵: Ընդհանուր առմամբ, այյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ մեր ներմուծման 29.1%-ը և ԵԱՏՄ-ում, և Հայաստանում հարկվում են նույն կարգի մաքսատուրթերով, ներմուծման 6.7%-ի համար կիրառվող ՀՀ մաքսատուրթերն ավելի բարձր են, քան ԵԱՏՄ-ում, և մնացածի մասով՝ ԵԱՏՄ մաքսատուրթերն են ավելի բարձր: Ընդ որում, ներմուծման 32.8%-ը ԵԱՏՄ-ում հարկվում են 10%-ից բարձր մաքսատուրթերով:

⁴ Քանի որ վերլուծությունում օգտագործված են 2013 թ. տվյալները, ապա ծխախոտի մասով ևս մինչ 2014 թ. գործել է հատուկ մաքսատուրթ՝ համաձայն հաստատագրված վճարների մասին ՀՀ նախկին օրենքի կարգավորումների, որն ուժը կորցրած է ձանաշվել 2014-ից:

⁵ Ինչպես արդեն նշվել է, ԵԱՏՄ սակագնային համակարգը բավականին տարբերակված է և ըստ դրույքների, և ըստ տեսակների, բայց որպեսզի վերլուծության առումնով և ՀՀ-ում նախկինում գործող, և ԵԱՏՄ տարիքային համակարգերի համեմատության համար համարդելիությունն ապահովվի, տարիքները բաժանվել են միջակայքերի: Օրինակ՝ ՀՀ-ի համար գորեք բոլոր ապահոված կուտակվել են 0<3 և 8<10 միջակայքերում, որովհետև մեր երկրում գործող սակագները եղել են կամ 0, կամ 10, իսկ հատուկ սակագները բերվել են արժեքային՝ ուղղակի վճարված մաքսատուրթը հարաբերելով տվյալ վեցանիշ դասակարգմանը ապրանքատեսակի ներմուծման արժեքին, ուստի որոշ դեպքերում կարող ենք ներմուծման կշռի ցուցանիշ տեսնել, օրինակ՝ 5<8 միջակայքում: Դա նշանակում է՝ վերոնշարագրյալ մեթոդով հատուկ տարիքը արժեքայինին բերելիս այն հայտնվել է 5<8 միջակայքում:

Աղյուսակ 1

**Հայաստանի՝ մինչ անդամակցության և ԵԱՏՄ-ում ներմուծման մաքսատուրբերի
խմբերը և դրանց բաժին ընկող ներմուծման ծավալները 2013 թ.⁶**

ԵԱՏՄ

Հայաստան	0<3%	3<5%	5<8%	8<10%	10<15%	15<20%	20<25%	25<30%	>30%	Ընդամենը
0<3%	27.4	18.7	8.0	4.7	8.4	3.1	0.0	0.0	0.0	70.2
3<5%	0.0	0.1	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2
5<8%	0.3	0.2	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	1.0
8<10%	2.7	2.1	1.4	1.3	10.6	5.9	0.3	1.7	2.6	28.6
Ընդամենը	30.4	21.1	9.8	6.0	19.0	9.0	0.3	1.7	2.8	100.0

Ծանոթություն. Կիրառված մաքսատուրբերը ԱՏԳ վեցանիշ մակարդակով են հաշվարկված, կշիռներն ապրանքների ներմուծման մասնաբաժններն են ընդհանուրի մեջ՝ որպես հիմք ընդումելով 2013 թ. ներմուծման տվյալները:

Այժմ, վերը նկարագրված սակագնային համակարգերի համեմատության ներքո, կատարվել է ուսումնասիրություն. Ենթադրվել է, որ Հայաստանն ամբողջովին կիրառում է վերոնկարագրյալ ԵԱՏՄ տարիքային համակարգը և այդ պարագայում հաշվարկվել է, թե որքան է լինելու առաջնային ազդեցությունը մի շարք մակրոտնտեսական փոփոխականների վրա: Նախ դիտարկենք գնաճի վրա առաջնային ազդեցությունը: Արդյունքները ցույց են տալիս, որ ԵԱՏՄ գործող տարիքային համակարգը եթե Հայաստանի տնտեսությունում անմիջապես կիրառվեր (առանց տարիքային խմբերի բացառությունների, որոնց շուրջ բանակցվեց), ապա առաջնային ազդեցությունը գնաճի վրա կլիներ 1.2–1.4% տոկոսային կետ⁷: Թերևս այս ցուցանիշը ներ տնտեսությունը կարող էր կլանել, սակայն, այնուամենայնիվ, այս իրավիճակը մեղմելու և ԵԱՏՄ բարձր տարիքների բացասական ազդեցությունը << տնտեսության վրա նվազեցնելու նկատառումներից ելնելով էր բանակցային գործընթացների շրջանակներում քննարկվել և առանձնացվել է շուրջ 780 տեսակի ապրանքների սակագների անփոփոխ մակարդակ առաջիկա 3–7 տարիների համար (միջին հաշվով՝ 5 տարի):⁸ Մասնավորապես՝ բանակցությունների առարկա դարձած 752 ապրանքատեսակների մասով Հայաստանի սակագներն ավելի ցածր էին, քան ԵԱՏՄ-ինը (ևս 10 ապրանքատեսակների մասով կատարվել է հատուկ կարգավորում, ըստ որի պահպանվելու են << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրբերը), և 18 ապրանքատեսակների մասով Հայաստանի մաքսատուրբերն ավելի բարձր էին, քան ԵԱՏՄ-ինը: Վերջինս հիմնականում ներառում էր գյուղատնտեսական ապրանքները, որոնց մասով անհրաժեշտություն կար դեռևս կիրառելու պաշտպանական 10% մաքսատուրբի դրույքաչափը՝ ԵԱՏՄ 0%-ի փոխարեն, հակառակ դեպ-


⁶ Հաշվարկները կատարված են WITS-ի (World International Trade Solutions) տվյալների և Համաշխարհային բանկի SMART գործիքի հիման վրա:

⁷ Գնահատականը ստացվել է հետևյալ կերպ. հաշվի են առնվել սպառողական ապրանքների ներմուծման սակագների աճի ցուցանիշները՝ դրանք կիրառելով ՍԳԻ՝ զամբյուղի մեջ մտնող ներմուծված ապրանքատեսակների կշռների վրա:

⁸ Հայաստան՝ ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 4-րդ հավելվածով տրված է այն ապրանքների ցանկը, որոնց գծով պահպանվելու են <<ում գործող սակագները, ինչպես նաև նշված է այն ժամանակահատվածը, որի ավարտից հետո կիրառվեն ԵԱՏՄ սակագները:

քում Հայաստանի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կարող էր 3-րդ երկրներից ներմուծման էական ճնշումների տակ հայտնվել և չփինանալ մրցակցությանը: Պետք է նաև նշել, որ ընտրված 752 ապրանքատեսակները թեև սակագնային 10 հազար տողերի (ըստ ԱՏԳ 10-անից դասակարգման) չնչին մասն են կազմել, սակայն, ըստ << ներմուծվող ապրանքների (առանց բնական գազի ներմուծման) ծավալի, հասնում են 46%-ի: Ընդ որում, նշյալ 752 ապրանքատեսակների գծով սակագների տարրերությունն ամենամեծն է (օրինակ՝ սարեցված խոզի մսի ներմուծման դեպքում <<-ում կիրառվում է 10%, ԵԱՏՄ-ում՝ 65%): Եթե դիտարկենք միայն բացառումների գծով հաշվարկված միջին կշռված մաքսատուրքերը, ապա << պարագայում դա կազմում է 2.7%, իսկ ԵԱՏՄ-ի դեպքում՝ 13.2%: Մնացած ապրանքատեսակների գծով << միջին կշռված մաքսատուրքը 3.4% է, ԵԱՏՄ-ինը՝ 4.7%: Այս ցուցանիշներն արդեն վկայում են, որ բանակցությունների առարկա սակագնային բացառումները հնարավորություն են տվել մոտեցնելու << և ԵԱՏՄ սակագները, իսկ այս պարագայում արդեն գնաճի ազդեցությունը գնահատվում է 0.2–0.4 տոկոսային կետ, որը մեր տնտեսությունն ամբողջությամբ ի զորու է կլանելու:

Այստեղ կարևոր է նաև ուշադրություն դարձնել վերոնշյալ ապրանքատեսակների գծով բացառումների (արտոնությունների) կիրառման ժամկետներին, որը, միջին հաշվով, 5 տարի է: Խնդիրն այն է, որ ՈՂ-ն, լինելով Արևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ, ունի ստանձնած պարտավորություններ՝ մինչև 2020 թ. նվազեցնել իր տարիֆները, իսկ քանի որ ԵԱՏՄ տարիփային համակարգի՝ ըստ ապրանքային տողերի 82%-ն ընդունված են ՈՂ սակագները, հետևաբար՝ առաջիկայում ԵԱՏՄ սակագնային համակարգը ևս պետք է համամասնորեն փոփոխության ենթարկվի: Իսկ դա նշանակում է, որ երբ Հայաստանի համար բացառումների ժամանակահատվածն ավարտվի, սակագների էական թթիչք չի արձանագրվի: Ստորև բերված է նկարագրված իրավիճակը.



Գծանկար 1. Ակնկալվող սակագնային շարժընթացք ԵԱՏՄ-ում (համաձայն ՈՂ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների) և Հայաստանում (ԵԱՏՄ-ին միանալուց հետո)

Վերլուծության արդյունքները գործնականին ավելի մոտեցնելու նկատառումներից ելնելով՝ խնդիր դրվեց նաև հաշվի առնել այն հանգամանքը, թե ինչ ազդեցություն կը ունենալ տնտեսությունը, երբ բացառումներն ամբողջությամբ վերանան, և, միևնույն ժամանակ ՈՂ՝ ԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորությունների ներքո իշեցվեն ԵԱՏՄ սակագները։ Այսինքն՝ զնահատվել են առևտուրի և բարեկեցության ազդեցությունները՝ այս անգամ արդեն 2020 թ. սակագնային համակարգի արդյունքներով⁹։ Այդուսակ 2-ում բերված ցուցանիշներն արդեն վերահաշվարկված են ԵԱՏՄ նոր տարիքային ցուցանիշներով։

Այուսակ 2

Հայաստանի՝ մինչ անդամակցության և ԵԱՏՄ-ում ներմուծման մաքսատուրքերի խմբերը և դրանց բաժին ընկած ներմուծման ծավալները 2020 թ. մաքսատուրքերով

ԵԱՏՄ

Հայաստան	0<3%	3<5%	5<8%	8<10%	10<15%	15<20%	20<25%	25<30%	>30%	Ընդամենը
0<3%	29.3	21.7	11.5	3.1	4.1	0.5	0.0	0.0	0.0	70.2
3<5%	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2
5<8%	0.5	0.3	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2	0.0	1.0
8<10%	2.9	3.0	5.3	6.0	6.8	1.2	0.9	0.9	1.8	28.6
Ընդամենը	32.7	25.2	16.8	9.1	10.9	1.7	0.9	1.1	1.8	100.0

Ծանոթություն. Վերառված մաքսատուրքերը ԱՏԳ վեցանիշ մակարդակով են հաշվարկված, կշռներն ապրանքների ներմուծման մասնաբաժիններն են ընդհանուրի մեջ՝ որպես հիմք ընդունելով 2013 թ. ներմուծման տվյալները։

Այդուսակում ներկայացված տվյալներից ակնհայտ երևում է գծանկար 1-ում պատկերված իրավիճակը թվերով, այսինքն՝ ԵԱՏՄ մաքսատուրքերի նվազման միտունը, որի ներքո, օրինակ՝ 2020-ին արդեն 10%-ից բարձր մաքսատուրքերով կիարկվի մեր ներմուծման ոչ թե 32.8%-ը, այլ 16.4%-ը։ ԵԱՏՄ և << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրքերը նույնն են ներմուծման 35.5% ապրանքների մասով, 12.0%-ի մասով << մաքսատուրքերն ավելի բարձր են, իսկ մնացած դեպքերում ԵԱՏՄ մաքսատուրքերն են ավելի բարձր։ Այստեղ կարևոր է նշել մեկ հանգամանք ևս. Վերոնշյալ նվազումը հիմնականում նկատվելու է այն ապրանքախմբերի մասով, որոնց գծով ներկայումս կիրառվող մաքսատուրքերն էականորեն բարձր են << մինչ անդամակցությունը գործող մաքսատուրքերից։

Մաքսատուրքերի երկու համակարգերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո զնահատվել է նաև Վայների էֆեկտը << տնտեսության համար, այն է՝ առևտուրի ստեղծումը և առևտուրի վերակողմնորոշումը¹⁰։ Ընդ որում,

⁹ ԵԱՏՄ սակագները ճշգրտվել են հետևյալ մեթոդով. հիմք են ընդունվել ԵԱՏՄ սակագները՝ դուրս բերելով այն տողերը, որոնք համընկնում են ՈՂ-ինի հետ։ Դրանք մոտ 8140 տող են կազմել՝ ըստ տասանիշ դասակարգման։ Այնուհետև այդ տողերը ճշգրտվել են ԱՀԿ-ի նկատմամբ ՈՂ՝ ըստ սակագների ստանձնած պարտավորությունների։ Այս հաշվարկները կատարելուց հետո վերահաշվարկվել են նաև ԵԱՏՄ միջին կշռած սակագնը, որը կազմել է 5.4% սկզբնական 8.14%-ի փոխարեն։

¹⁰ Տերմինը շրջանառության մեջ է մտել 1950 թ. ԵՄ Մաքսային միության ստեղծման շրջանակներում տնտեսագետ Յակոբ Վայների առևտուրի ստեղծման և առևտուրի վերակողմնորոշման թեգերի առաջադրության հետո։

հաշվարկները կատարվել են և 2013 թ. ԵԱՏՄ սակագնային համակարգով (ուժի մեջ է այն ենթադրությունը, թե ինչպիսին կլիներ ազդեցությունը մեր տնտեսության վրա, եթե չիմեծ բանակցություններ բացառումների շուրջ), և 2020 թ. համար Վերահաշվարկված ԵԱՏՄ սակագնային համակարգով:

Արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի՝ ԵԱՏՄ մաքսատուրքի աճբողջական ընդունումը ենթադրում էր ներմուծման որոշակի կրծատում ոչ ԵԱՏՄ աղբյուրներից, որոշ ապրանքատեսակների ներմուծման աճ ԵԱՏՄ աղբյուրներից (առևտրի Վերակողմնորոշում) և բարեկեցության ոչ մեծ վնասներ՝ պայմանավորված ներմուծման համար սպառողների վճարած ավելի բարձր գներով¹¹:

Ըստ ստացված գնահատականների՝ այն ապրանքների ներմուծման ծավալների կրծատումը, որոնց գծով մաքսատուրքը բարձրանում է, սկզբնական շրջանում կկազմի 215.4 միլիոն դոլար (*ՀՆԱ 2.1 տոկոսը*)՝ նվազելով և հասնելով մինչև 117.8 միլիոն դոլարի (*ՀՆԱ 1.1 տոկոսը*), երբ հաշվի են արևոտն 2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքերի նվազեցումները: Միևնույն ժամանակ, ապրանքների ներմուծման աճը, որոնց գծով մաքսատուրքերը ԵԱՏՄ շրջանակում նվազելու են, սկզբնական շրջանում գնահատվում են 15.3 միլիոն դոլար (*ՀՆԱ 0.15 տոկոսը*)՝ մինչև 2020 թ. հասնելով 21.2 միլիոն դոլարի (*ՀՆԱ 0.2 տոկոսը*):

3-րդ այդուսակում բերված են ներմուծման 15 խմբերը, որոնց առևտրի ծավալներում, ըստ գնահատականների, ԵԱՏՄ 2013 թ. մաքսատուրքի պայմաններում կարծանագրվեր ամենամեծ անկումը: Ամկումը ներկայացված է ինչպես ներմուծման ծավալային արժեքով, այնպես էլ *ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ*: Ապրանքախմբերը, որոնք մեծ խմբաքանակներով են ներմուծվում, և որոնց մաքսատուրքը մեծ փոփոխությունների կարող էր ենթարկվել, վերաբերում են թօչնամսին, խոզի մսին, ավտոմեքենաներին և ավտոբուսներին: Առևտրի տվյալներում նշված հնարավոր տեղաշրջերը հաստատվել են նաև Պազախստանի փորձով՝ սկսած 2010 թ. Վերջին ԵԱՏՄ անդամակցությունից: Պազախստանի կողմից ոչ ԵԱՏՄ-ից ներմուծվող մարդատար ավտոմեքենաների քանակը (ԱՏԳ ՆՀ 870323) կտրուկ նվազեց՝ 2007 թ. 1.30 միլիարդ դոլարից 2012 թ. հասնելով 390 միլիոն դոլարի: ԵԱՏՄ-ից կատարվող ներմուծումներն աճեցին՝ 2007 թ. 130 միլիոն դոլարից 2013 թ. հասնելով 360 միլիոն դոլարի, որն ամենակին էլ բավարար չէր ԵՄ-ից և Ճապոնիայից մատակարարման անկման դիմաց փոխհատուցելու համար: Նմանատիպ իրավիճակ կարող էր ստեղծվել նաև <<-ում, եթե բանակցություններ տեղի չունենային 3-րդ և 4-րդ այդուսակներում բերված ապրանքախմբերի բացառումների մասով: Այլ կերպ ասած՝ հենց այս իրավիճակի գնահատականներն էլ հիմք են դարձել բանակցելու վերոնշյալ ապրանքատեսակների մասով բացառումների շուրջ, որոնք ամրագրվել են << ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 3-րդ (հատուկ կարգավորումների մասով) և 4-րդ հավելվածներում¹²:

¹¹ Բարեկեցության ազդեցությունը գնահատվել է առևտրի տեսության մեջ հայտնի մասնակի հավասարակշռության մոդելը կիրառելիս: մասնավորապես՝ մաքսատուրքերի բարձրացման գույտ ազդեցության հետևանքով սպառողները ստիպված են լինում ավելի քիչ ապրանքներ սպառել բարձրացված գների պատճառով, նյութ կողմից՝ պետությունը լրացնից մաքսատուրքը է հավաքագրում մաքսատուրքերի բարձրացման հաշվին, իսկ արտադրողները, ովքեր արտադրում են նոյն ներմուծված ապրանքները, կարողանում են գնային առավելություն ստանալ:

¹² 3-րդ և 4-րդ այդուսակներում բերված գրեթե բոլոր ապրանքախմբերի մասով բացառումներ են սահմանված, այսինքն՝ ԵԱՏՄ-ին << անդամակցությունից հետո կշարունակվի << նախկին մաքսատուրքերի կիրառությունը:

Աղյուսակ 3

**Մաքսատուրքի փոփոխությունների ազդեցությունը ներմուծման վրա՝
2013 թ. ԵԱՏՄ նաքսատուրքի կիրառմամբ¹³**

Անույնի ուղարկման տարեթիվ	Ասկրիուս	Ապրանքի մկարագիր	Առաջդիր ծավալային գործ ստուգում. Trade creation (1000 ԱՄ դրամ)	Ներմուծման կողմունությունը (%՝ <ԱՀ նկատմամբ)	Հայաստանի ճարագարական արժուագիրը ԵԱՏՄ	ԵԱՏՄ ճարագարական արժուագիրը ԱՀ	Արտահանող երկրներ
020714	Ընտանի հավ, Ենթամասեր և սննդային ենթամթերք՝ սարեցրած	-23,520	-0.23%	10	75.8	ԱՄՆ, Բրազիլիա, Չինաստան	
710812	Ուլի՝ այլ անմշակ տեսքով	-10,493	-0.10%	0	18.4	Նվեյցարիա	
710239	Այլ ոչ արդյունաբերական ալմաստներ	-8,264	-0.08%	0	12.7	ԱՍՏ, Բելգիա, Հնդկաստան, Նվեյցարիա	
240220	Սիկարետներ (ծխախոտ պարունակող)	-7,953	-0.08%	6.5	19.6	Ուկրաինա	
870323	Թթվակ մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի 1500-3000 լ/սմ աշխատանքային ծավալով	-7,344	-0.07%	10	37.4	Ճապոնիա, Հ. Կորեա, Գերմանիա, ԱՍՏ	
271011	Նավթ (ոչ հոլմ)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտունացված հանքաքարից, թթվակ դիստիլյատ (օր.՝ բենզին)	-7,292	-0.07%	0	4.5	Ուսմինիա, Բուլղարիա	
300490	Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	-6,374	-0.06%	0	7.7	Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Նվեյցարիա	
271019	Նավթ (ոչ հոլմ)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտունացված հանքաքարից (օր.՝ բամոյութեր)	-6,322	-0.06%	0	4.8	Իսրայել, Իրաք, Թուրքմենստան	
020329	Խոզի միս՝ ազդեցի և թիակներ (արջկի ազդեցի) և դրանց հատվածներ՝ ուկրահան չարված	-4,881	-0.05%	10.0	52.5	Բրազիլիա, Իտալիա	
710813	Ուլի՝ այլ կիսամշակված տեսքով	-3,505	-0.03%	0	19.0	Ավստրիա, Նվեյցարիա, ԱՍՏ	
020321	Խոզի միս՝ սարեցրած, մսեղիք և կիսամսեղիք	-3,456	-0.03%	10.0	65.0	Բրազիլիա, Իտալիա	
020230	Խողոր եղջերավոր անասունների միս՝ սարեցրած, ուկրահան արված	-3,333	-0.03%	10.0	28.3	Հնդկաստան, Բրազիլիա	
870324	Մեծ մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի > 3000 աշխատանքային ծավալով	-3,061	-0.03%	10.0	31.4	Ճապոնիա, Գերմանիա, ԱՄՆ, Սլովակիա, Ավստրիա	

¹³ Աղյուսակներ 3-ում և 4-ում ներկայացված չէ փոփոխության ենթակա ապրանքախմբերի ամբողջական շարքը, բերված են միայն այն ապրանքատեսակները, որոնց մասով ներմուծման արժեքային փոփոխությունները քիչ թե շատ նշանակալի են:

870210	Ծարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ տեղափոխելու համար	-2,877	-0.03%	0	15.1	Զինաստան, Գերմանիա, Հ. Կորեա
020712	Ընտանի հավի միս՝ չնասնատված, թարմ	-2,865	-0.03%	10.0	80.0	Բրազիլիա, Բուլղարիա, Ուկրաինա
Ներմուծման նվազում՝ ներառյալ այլ ապրանքներ		-230,640	-2.21%			
090111	Սոլր (չբոված կամ առանց կոֆեինի)	2,336	0.02%	10.0	0	Ինդոնեզիա, Վիետնամ, Ուգանդա, Եթովպիա
851712	Հեռախոսային կամ հեռագրային էլեկտրական ապարատներ հաղորդալարային կապի համար	2,131	0.02%	10.0	0	Զինաստան, Վիետնամ
080300	Բանաններ, ներառյալ պանուայններ՝ թարմ կամ չորացրած	920	0.01%	10.0	4.3	Էկվադոր, Կոստա Ռիկա
481840	Կանացի հիգիենիկ միջադիրներ և վիրախնձորներ (տապաններ), մանկական խանձարուրներ, տակդիրներ և համանման սանհիտարահիգիենիկ իրեր	642	0.01%	10.0	4.7	Զինաստան, Հունգարիա, Կիպրոս, Շվեյցիա, Բուլղարիա
841510	Օդի ռոսկավորման ավտոնոմ կայանքներ պատուհանի կամ պատի համար	488	0.0%	10.0	0	Զինաստան, Թաիլանդ
Ներմուծման աճը՝ ներառյալ՝ այլ ապրանքներ		15,287	0.15			
Ընդհանուր ազդեցությունը		-215,352	2.06			

Ծանոթություն. $\angle \Sigma = 10.44$ մլրդ ԱՄՆ դոլար, 2013 թ.

Աղյուսակ՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա

4-րդ այլուսակում ցույց է տրվում մինչև 2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի նվազման հետևանքով սպասվող ներմուծման ամկման զսպումը: Օրինակ՝ սպասվում է, որ ծխախոտի ԵԱՏՄ մաքսատուրքը 2013 թ. 19.6%-ից կնվազի՝ 2020 թ. հասնելով մինչև 8.8%-ի, որը նոտ է Հայաստանի համար հաշվարկված 6.5% մաքսատուրքին¹⁴:

5-րդ այլուսակում ներկայացված են Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության արդյունքում ի հայտ եկող առևտորի վերակողմնորոշման ցուցանիշները: Թվարկված ապրանքները ներմուծվելու են Ռուսաստանից կամ Բելառուսից՝ ԵԱՏՄ ներմուծման մաքսատուրքն ընդունելու արդյունքում (առևտորի վերակողմնորոշում): Ապրանքատեսակները, որոնց առնչությամբ ակնկալվում է Ռուսաստանից կամ Բելառուսից ներմուծման ծավալների ավելացում, հանդիպում են 2020 թ., թեև ծավալները պակաս են, ինչը բացատրվում է նրանով, որ 2020-ին ԵԱՏՄ մաքսատուրքերն ավելի ցածր են լինելու, հետևաբար՝ 3-րդ երկրի նկատմամբ կիրառվող ԵԱՏՄ և ՀՀ մաքսատուրքերի տարբերությունը, ըստ հաշվարկների, նվազում է, ուստի թուլանում են առևտուրը դեպի ԵԱՏՄ վերակողմնորոշելու խթանները:

¹⁴ Ծխախոտի գծով 6.5% մաքսատուրքը հաշվարկվել է մինչ 2014 թ. գործող հաստատագրված վճարներից, որը վերացվել է նշված թվականին, և գործում է 10% մաքսատուրքի դրույթաչափը:

Աղյուսակ 4

**Մաքսատուրքի փոփոխությունների ազդեցությունը ներմուծման վրա՝
2020 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի կիրառմամբ**

Անձնային տվյալ-ների տպարժեքով Ակ- րանք	Ապրանքի մկարագիր	Անձնային ժամակական գերի ընդունմամբ. Trade creation (1000 ԱՄՆ դոլար)	Անդամակցություն հիմքում ուղղված (%՝ > ՆՎՀ մաքսատուրք)	Հայրենական ճնշումներ	ԵԱՏՄ մաքսատուրք	Արտահանող երկրներ (կամ որ երկրնե- րից է << ներմուծվում)
2013	020714 Ընտանի հավի՝ մսեղիքի մասեր և սննդային ենթամթերք՝ սարեցրած Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտումացված հանքաքարից, թերև դիստիլյատ (օր.՝ բենզին)	-23,521	-0.23%	10.0	75.8	ԱՄՆ, Բրազիլիա, Չինաստան
	271011 Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտումացված հանքաքարից (օր.՝ բենզին)	-7,292	-0.07%	0.0	4.5	Ռումինիա, Բուլղարիա
	710812 Ուսկի՝ այլ անմշակ տեսքով	-6,843	-0.07%	0.0	12.0	Ծվեյցարիա
	271019 Նավթ (ոչ հում)՝ այլ նավթավերամշակման արտադրանքից և բիոտումացված հանքաքարից (օր.՝ բամնյութեն)	-6,322	-0.06%	0.0	4.8	Իսրայել, Իրաք, Թուրքմենստան
	870323 Թերև մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի 1500-3000 լս/սմ աշխատանքային ժավալով	-5,575	-0.05%	10.0	30.7	Ճապոնիա, Հ. Կորեա, Գերմանիա, ԱՄՆ
	710239 Այլ ոչ արդյունաբերական ալմաստներ	-5,509	-0.05%	0.0	8.5	ԱՄԷ, Բելգիա, Հնդկաստան, Ծվեյցարիա
	020230 Խոշոր ենջերավոր անասունների վնա՝ սառեցրած, ուկրաիան արված	-3,333	-0.03%	10.0	28.3	Հնդկաստան, Բրազիլիա
	300490 Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	-2,928	-0.03%	0.0	3.6	Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ, Ծվեյցարիա
	020712 Ընտանի հավի միս՝ չմասնատված, թարմ	-2,865	-0.03%	10.0	80.0	Բրազիլիա, Բուլղարիա, Ռումինիա
	240220 Սիկարետներ (ծխախոտ պարունակող)	-2,782	-0.03%	6.5	8.8	Ռումինիա, Գերմանիա
2014	710813 Ուսկի՝ այլ կիսամշակված տեսքով	-2,767	-0.03%	0.0	15.0	Ավստրիա, Ծվեյցարիա, ԱՄԷ
	870210 Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ տեղակիցներու համար	-2,654	-0.03%	0.0	14.0	Ճինաստան, Գերմանիա, Հ. Կորեա
	870324 Մեծ մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչի > 3000 աշխատանքային ժավալով	-2,462	-0.02%	10.0	27.2	Ճապոնիա, Գերմանիա, ԱՄՆ, Ալիվակիա, Ավստրիա

	870422	5-20 տոննա ընդհանուր զանգվածով շարժիչային տրանսպորտային միջոցներ բեռները տեղափոխելու համար	-2,448	-0.02%	0.0	12.9	Ծվերիա, Գերմանիա, Միունիշեր
	151211	Բամբակի յուր և դրա զտաճառերը՝ չզտած	-1,468	-0.01%	5.0	13.1	Ուկրաինա, Վրաստան
Ներմուծման նվազումը, ներառյալ այլ ապրանքներ			-117,772	-1.13%			
	090111	Սուրճ (չբոված կամ առանց կոֆեինի)	2,336	0.02	10.0	0	Ինդոնեզիա, Վիետնամ, Ռիանդա, Եթովպիա
	851712	Հեռախոսային կամ հեռագովային էլեկտրական ապարատներ հաղորդայարային կապի համար	2,131	0.02	10.0	0	Չինաստան, Վիետնամ
	080300	Բանաններ, ներառյալ պլանտայններ՝ թարմ կամ չորացրած	920	0.01	10.0	4.3	Էկվատոր, Կոստա Ռիկա
	481840	Կանաչի հիգիենիկ միջադիրներ և վիրախուժներ (սամպոններ), մանկական խանձարուրներ, տակոդիրներ և համանման սանիտարահիգիենիկ իրեր	642	0.01	9.1	4.7	Չինաստան, Հունգարիա, Վիանու, Ծվերիա, Բուլղարիա
	841510	Օղի որակավորման ավտոնոմ կայաններ պատուհանի կամ պատի համար	488	0.00	10.0	0	Չինաստան, Թաիլանդ
Ներմուծման աճը՝ ներառյալ այլ ապրանքներ			21,236	0.20%			
Ընդհանուր ազդեցությունը			-96,536	-0.92%			

Ծանոթություն. $\zeta\sum = 10.44$ մլրդ ԱՄՆ դոլար, 2013 թ.

Միջուրը՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկերի հիման վրա

Այլուսակ 5

Առևտուրի վերակողմնորոշումը (Trade Diversion) կարճաժամկետ հեռանկարում (2013 թ. մաքսաստուրքեր)

Գործընկեր	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի նկարագիր	Առևտուրի վերակողմնորոշման ազդեցությունը (1000 ԱՄՆ դոլար)	%՝ ՀՆԱ-ի մկանմամբ
Ուստաստան	271019	Նավթ (ոչ հում)` այլ նավթավերամշակման արտադրանքից և բիտումացված հանքաքարից, օր.՝ քսանյութեր	3,800	0.038
Ուստաստան	240220	Ծխախոտներ (ծխախոտ պարունակող)	2,362	0.024
Ուստաստան	870323	Թեթև մարդատար ավտոմեքենաներ՝ շարժիչ 1 500-3000 լի/ս աշխատանքային ծավալով	1,082	0.011

ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	870422	5-20 տոննա ընդհանուր զանգվածով շարժիչային տրամսադրութային միջոցներ՝ բեռները տեղափոխելու համար	798	0.008
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	340220	Մակերևութակտիվ օրգանական նյութեր, լվացող ու մաքրող միջոցներ, որոնք պարունակում են օրգանական մակերևութակտիվ նյութեր մանրածախ վաճառքի համար	677	0.007
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	151219	Արևածաղկի յուղ, քրքումի յուղ և դրա զտամասերը (բացի հում յուղից)	597	0.006
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	220860	Էթիլային սպիրուտ, չքնակիուսված, 80 ծավալ %-ից պակաս սպիրուտի պարունակությամբ, ոմակելիքներ, ալկոհոլային այլ խմիչքներ	513	0.005
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	180690	Կակաոյից պատրաստուկներ (մածուկանման, փոշենման, հատիկների ձևով՝ բեռնարկերում կամ փաթեթավորմանը)	447	0.005
ԲԵԼԱԶՈՒՄ	870410	Ավտոմեքենաներ բեռների տեղափոխման համար, արտաձանապարհային օգտագործման համար նախատեսված ինքնաթափեր	417	0.004
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	151790	Այլ պատրաստուկներ կենդանական կամ բուսական ձարպերի կամ յուղերի	407	0.004
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	401110	Նոր ռետինե դոլեր մարդաստար ավտոմեքենաների համար	314	0.003
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	300490	Այլ դեղամիջոցներ (մանրածախ վաճառքի համար)	301	0.003
ՈՈՒՍԱՍՏՈՒՄ	330510	Օճառահեղուկներ	294	0.003

Աղբյուր՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա

Ինչպես վերը ներկայացվեց, ներմուծման կորուստներն աստիճանաբար պակասում են, քանի որ ԵԱՏՄ մաքսատուրքերը ժամանակի ընթացքում կնվազեն: Ըստ այդմ՝ գնահատված է, որ Հայաստանի համար բարեկեցության կորուստները կլինեն 14.18 միլիոն դոլար (Հայաստանի 2013 թ. ՀՆԱ 0.14 տոկոսը), եթե Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցի 2013 թ. մաքսատուրքի կիրառմանք՝ կորուստների մինչև 9.31 միլիոն դոլար նվազմանք (ՀՆԱ 0.09 տոկոսը) մինչև 2020 թ., քանի որ ԵԱՏՄ մաքսատուրքը ժամանակի ընթացքում պակասում է: Այսինքն՝ նույնիսկ 2013 թ. ԵԱՏՄ մաքսատուրքի ամբողջական կիրառման դեպքում զուտ ազդեցությունը (կորուստը) ՀՀ տնտեսության վրա շատ մեծ չէ: Դա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև գնահատվում է, որ սպառողները կունենան բարեկեցության անկում ներմուծման կրծատման պատճառով, սակայն, մյուս կողմից, քանի որ Կառավարությունը լրացրացիք բյուջետային մուտքեր է ունենում բարձր մաքսատուրքերի հաշվին, դա որոշ չափով փոխառուցում է ներմուծման կրծատման հետևանքով բարեկեցության վնասմերը:

Մաքսատուրքերի գծով բյուջետային մուտքերի համար ունենք հետևյալ պատկերը. 2013 թ. տվյալներով ներմուծումից հավաքագրված մաքսատուրքը կազմել է 46.3 մլրդ դրամ կամ 113 մլն ԱՄՆ դոլար: Եթե ընդունենք, որ ԵԱՏՄ մաքսատուրքերն ամբողջապես կիրառվում են << 2013 թ. ներմուծման ծավալների և կառուցվածքի նկատմամբ (առանց բանակցված բացառումները հաշվի առնելու), ապա զմահատված է, որ մաքսատուրքերի գծով մուտքերը կկազմեն շուրջ 230 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ 117 մլն ԱՄՆ դոլարով ավելի¹⁵: Հարկ է նշել, որ << բանակցված մասնաբաժինը ընդհանուր ԵԱՏՄ շրջանակներում հավաքագրվող ընդհանուր մաքսատուրքերից կազմում է 1.11%՝ ընդ որում պահպանելով նաև բանակցված շուրջ 780 ապրանքատեսակի գծով << նախկին մաքսատուրքերը: 2013 թ. ԵԱՏՄ կողմից ընդհանուր բյուջե (որտեղից բաշխվում են միջոցները երկրների միջև ըստ յուրաքանչյուրի տոկոսային մասնաբաժնի) հավաքագրված մաքսատուրքը կազմել են շուրջ 24.0 մլրդ ԱՄՆ դոլար: Այլ հավասար պայմաններում նշված ցուցանիշի 1.11%-ը կազմում է 240 մլն ԱՄՆ դոլար, ինչը փոքր-ինչ ավելի է մոդելի զմահատումից:

Ստորև ներկայացված 6-րդ այլուսակում 2013 և 2020 թթ. ու նախկինում զմահատված բարեկեցության կորուստներն ամփոփ համեմատվում են միջանց հետ: Առևտության ավելի ցայտուն կորուստները և բարեկեցության վրա ազդեցությունները պայմանավորված են ամենաբարձր մաքսատուրքով ապրանքների ազդեցությամբ, որոնք ավելի հստակ նկատելի են Վերանայված տվյալների պարագայում, և որոնց մասով արդեն իսկ բանակցված է բացառումների կիրառումը (այսինքն՝ <<-ն շարունակելու է կիրառել իր նախկին մաքսատուրքերը առաջիկա մոտ 5 տարիների ընթացքում):

Կարենոր է նշել նաև, որ ՈՂ-ն ոչ ԵԱՏՄ երկիր որոշ ապրանքատեսակների արտահանման դեպքում կիրառում է մաքսատուրքեր. օրինակ՝ զագի մասով՝ 30%, չնշակված ադամանդի պարագայում՝ 7.5% և այլն: Ըստ ԵԱՏՄ ստեղծման մասին պայմանագրի՝ արտահանման նշյալ մաքսատուրքը չեն կիրառվում ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման դեպքում: Հետևաբար՝ ԵԱՏՄ անդամակցությամբ Հայաստանը ստանում է առավելություններ. միայն ՈՂ-ի կողմից զագի արտահանման 30% մաքսատուրքի չկիրառումը հանգեցնում է 10 անգամ ավելի մեծ տնտեսական օգուտների՝ տարեկան մոտ 140 մլն դոլար կամ ՀԱՀ 1.4%-ի չափով, որը Հայաստանը պարտադրված կլիներ վճարել, եթե չիներ ԵԱՏՄ անդամ:

Աղյուսակ 6 ԵԱՏՄ-ին Հայաստամի ամդամակցության արդյունքում բարեկեցության փոփոխությունները

ԵԱՏՄ մաքսատուրքի սեննայ	Բարեկեցութան աճ (մին ԱՄՆ դոլար)	%՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Հայաստան		Մաքսային միություն	
			Պարզ միջին մաքսատուրք	Կշռված միջին մաքսատուրք	Պարզ միջին մաքսատուրք	Կշռված միջին մաքսատուրք
2020	-9.31	-0.09%	3.43	3.1	6.44	5.42
2013	-14.18	-0.14%	3.43	3.1	8.43	8.14

Աղյուրը՝ WITS և SMART գործիքակազմի կիրառմամբ հաշվարկների հիման վրա

¹⁵ Գնահատականը ստատիկ է. չի ներառում մաքսատուրքերի փոփոխության հետևանքով ներքին տնտեսությունում առաջ եկող հարաբերական գների փոփոխությունը՝ յուրաքանչյուր ապրանքատեսակի մասով պահանջարկի առածզականություններ գներից կախված, հետևաբար՝ ներմուծման կառուցվածքային տեղաշարժերը ժամանակի ընթացքում:

ԵԱՏՄ անդամակցության մյուս օգուտը <<-ն ունենալու է ոչ սակագնային կարգավորումների ներդաշնակեցման դեպքում, որի արդյունքում ԵԱՏՄ երկրներ արտահանողների ծախսերը նվազելու են (ծախսերի կորը տեղափոխվելու է ձախ ներքն՝ վերջիններիս տալով լրացուցիչ գնային մրցունակություն): Այսպես օրինակ՝ մինչ անդամակցությունը ԵԱՏՄ շուկա արտահանող կազմակերպությունը պարտադրված էր ապրանքային յուրաքանչյուր խնբարանակի համար առևտորի արդյունաբերական պայմանագրությունը ստանալ ծագման սերտիֆիկատ, որը, միայն ժամանակի առումով, ծախս է: Նոր կանոններով՝ մեկ անգամ ծեռնարկությունը գրանցվում է համապատասխան ռեեստրում, և դրանից հետո յուրաքանչյուր խնբարանակի արտահանման դեպքում նոր ծագման սերտիֆիկատ չի պահանջվում: Ըստ որում, ՌԴ կամ ԵԱՏՄ անդամ երկրներ ապրանք տեղափոխելիս ներմուծման պահին չի ներկայացնում ծագման սերտիֆիկատ, քանի որ համապատասխան ռեեստրում գրանցվելն արդեն իսկ ներմուծող երկրի պատկան մարմնին հնարավորություն է տալիս տեսնելու, որ տվյալ ապրանքը «ԵԱՏՄ» ապրանք է: Նմանատիպ կանոններ են գործում նաև ոչ տարիֆային կարգավորումների այլ բնագավառներում (որակի ստանդարտներ, սննդի անվտանգությանը վերաբերող կանոններ և այլն): Այլ կերպ ասած՝ մաքսային ամբողջական զննում չի իրականացվում այն դեպքում, եթե ապրանքները տեղաշարժվում են ԵԱՏՄ անդամ երկրների միջև:

Քանի որ Հայաստանի համար ոչ սակագնային սահմանափակումների հետ կապված ծախսերի նվազման պատճական շարքեր չկան, որովհետև նմանատիպ գործընթաց <<-ում տեղի չի ունեցել մինչ ԵԱՏՄ անդամակցությունը, այդ իսկ պատճառով որպես հիմք են ընդունվել Ոչչարդ Բալդվինի և Չեզինիի աշխատությունների արդյունքները, որոնք ոչ սակագնային սահմանափակումների ազդեցությունը տնտեսավարողների ծախսերի վրա ԵՄ-ում գնահատել են 10% նվազում¹⁶: Ենթադրվել է, որ առնվազն նույնքան օգուտներ կունենան մեր արտահանողները դեպի ԵԱՏՄ շուկաներ արտահանման պարագայում, որը կիանգեցնի ՀՆԱ լրացուցիչ՝ 0.34 տոկոսային կետով աճի:

Երրորդ ուղղությամբ օգուտը գնահատված է լրացուցիչ մաքսատուրքերից մուտքի մասով: Իհարկե, բարեկեցության վրա ազդեցությունները գնահատելիս մոդելը տեսականորեն հաշվի է առնում բյուջեի լրացուցիչ մուտքերը: Սակայն, մյուս կողմից, քանի որ ավելի քանի 752 ապրանքատեսակի մասով մաքսատուրքերի բարձրացումներ չեն լինելու՝ բանակցված բացառումների շնորհիվ, հետևաբար և դրանց մասով սպառողների շրջանում բարեկեցության կորուստ չի լինելու, և, մյուս կողմից, ինչպես վերը նշվեց, Հայաստանն իր տոկոսային մասնաբաժնի հաշվին կստանա մաքսատուրքի ավելի գրւմար: Հետևաբար՝ սա ևս պետք է հաշվի առնել և, համապատասխանաբար, ավելացնել անդամակցությունից ստացվող շահումներին, որը գույտ արժեքով կազմում է շուրջ 80 մլն ԱՄՆ դոլար: Ստորև ներկայացվում է << ԵԱՏՄ-ին անդամակցության տնտեսական ազդեցությունների ամփոփ գնահատականը:

¹⁶ Տե՛ս The growth effects of 1992, Baldwin R., NBER Paper, Cecchini Report on The European Single Market, 1988:

ՀՆԱ տոկոսային կետ

Ոչ սակագնային սահմանափակումների վերացումից օգուտ	Գազի արտահանման մաքսատուրթի վերացումից օգուտ	Լրացուցիչ մաքսատուրթերի գուտ մուտքերից օգուտ	Վճարության մաքսատուրթերի գուտ բարձրացումից օգուտ	Ընդամենը կարծամկետ օգուտ ԵԱՏՄ-ին անդամակցումից
0.35	1.3	0.8	-0.1	2.4

Ամփոփելով պետք է նշել, որ Հայաստանը ԵԱՏՄ-ին անդամակցումից, զուտ հաշվարկներով, շահեկան վիճակում է լինելու, որի ստատիկ արժեքը զնահատված է ՀՆԱ 2.35 տոկոսային կետ: Վճարության առաջին խև տարում դրսորվելու են միայն այն ապրանքների մասով, որոնք չեն հայտնվել բացառումների ցանկում, սակայն դրանց վերաբերյալ մաքսատուրթերի բարձրացում դիտվելու է: Վերլուծությունը հնարավորություն տվեց փաստելու, որ մաքսատուրթերի բարձրացումը և դրա հաշվին երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների գների աճը սահմանափակ է լինելու:

ВАРДАН АРАМЯН

Первый заместитель руководителя
аппарата президента РА

Экономическая оценка присоединения Армении к Евразийскому экономическому союзу, как региональной интеграции.— Опыт стран в создании или присоединении к таможенным союзам показывает, что в ходе гармонизации тарифной и нетарифной систем, выявляются статические (первичное воздействие) или динамические экономические эффекты. Присоединение Армении к Евразийскому экономическому союзу (ЕАЭС) также имеет убытки и выгоды, которые оцениваются около 2,35% от ВВП с точки зрения чистой выгоды. За счет высоких тарифов ЕАЭС убыток благосостояния Армении оценивается в 0,14% от ВВП. В то же время, периодически высокие тарифы ЕАЭС будут уменьшаться, таким образом, снижая негативное воздействие на экономику Армении и уменьшая убытки благосостояния до 0,09% от ВВП:

Ключевые слова: таможенные пошлины, выгоды и убытки благосостояния, создание торговли, отвлечение торговли, инфляция, тарифные и нетарифные системы.

VARDAN ARAMYAN

First Deputy Chief of Staff of the Office
to the President of the RA

Economic Assessment of Armenia's Joining the Eurasian Economic Union as Regional Integration.— Countries' experience in creating or joining custom unions shows that in the course of harmonization tariff and non-tariff systems, the static (first round impact) or dynamic economic effects take place. Armenia joining the Eurasian Economic Union (EAEU) also has losses and gains, which have been estimated around 2.35% of GDP in net gains. The higher tariffs of EAEU cause Armenia's welfare loss in 0.14% of GDP. However, periodically the higher tariffs of EAEU are going to be diminished thus lowering the negative effects on Armenian economy and bringing the welfare loss to 0.09% of GDP.

Key Words: custom duties, welfare gains and losses, trade creation, trade diversion, inflation, tariff and non-tariff systems.